


ՏՆՈՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԲԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն սրեկն. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան քանակ 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղումն նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր

ՕՏԱՐ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ժողովուրդը ժողովելի իր յաւիտ 13ի թի-
ւին մէջ հրատարակած է «Հայոց նպատա-
մատոյց ժողովական Մասնախումբին» տեղե-
կագիրն ու հաշուեցոյցը որոնց մէկ ամփոփու-
մը կը փութանք ներկայացունել մեր ընթեր-
ցողներուն: Այս գրութեան, որ օտար մարդա-
տէրներու կողմէ մեզի նկատմամբ ցոյց տըր-
ուած վեհանքն հոգածութեան մը համարա-
տուութիւնն է, Հայաստանի եւ Կիլիկիոյ կա-
րօտեալներուն հասցեւորած գրամական օգնու-
թիւնները թուելէ ետք, մասնաւորապէս ու-
շադրութիւն կը հրաւիրէ հայ որդիներուն վրայ
որոնցմով դադարած է արդէն ու կը դադարեց-
նուի մարմին:

Նոյնութեամբ կը թարգմանենք տեղեկա-
գիրն ներածութիւնը. — «Կիլիկիոյ եւ Յունաս-
տանի գէտերը՝ ժողովուրդոց ու դիւանագէտ-
ներու ուշադրութեան հեռացոյցին փոքր-Ա-
սիոյ կացութիւնը եւ հայ ազգին ճակատագի-
րը: Սակայն ամենատեղեւոր տեղեկութիւններէ
կերելայ որ իրաց վիճակը փոփոխութիւն չէ
կրած ընտել: Բարեգործական մեծ շարժումը
որ Անգլիայէն ու Ամերիկայէն սկսելով, Զուի-
ցերիոյ մէջ ալ ծաւալեցաւ 1896ին, իրաւ է
թէ օգնեց հարկը հազարաւոր տարաբաղ-
ներու ապրուստին, որոնք գուցէ անօթութե-
նէ մեռած ըլլային, սակայն հազարաւորներ
զոհ գացին թշուառութեան եւ այժմ աղքա-
տութիւնը սաստիկ է ու ապագան մթին: Ո՛չ
գիւրականութիւնն է ո՛չ ալ ապահովութիւնը
չեն վերահաստատուած: Դեռ վերջերս առ-
նուած նամակ մը՝ երկրին բարեբերութեան
վրայ խօսելու առթիւ՝ կ'աւելցունէր — Յուսամ
թէ գրածներէս ո՛չ մէկն այն գաղափարը պի-
տի տայ ձեզի թէ այս ժողովուրդը լաւ կա-
ցութեան մը մէջ կը գտնուի: Մէկը որ վար-
ժուած չըլլայ թուրքիոյ ընդհանուր աղքա-
տութեան եւ մասնաւորապէս՝ կոտորածներէն
ի վեր անոր անմանը վրայ գաղափար չունե-
նայ, պիտի ըսէ թէ ահա ինչ թշուառութեան
մը վերջին աստիճանին հասած ենք»:

«Գաւառներու տեղական մասնախումբնե-
րը զորս կը կազմեն անգլիական հիւպատոս-
ները, ամերիկացի միսիօնարները եւ հայ երե-
ւելիներ, մեծ գործ կատարեցին եւ մարդ հիւ-
ցած կը մնայ տեսնելով թէ ինչե՛ր կը ցած են
ընել այդ սակաւակիւն անձեր, մեծատարած
ու աւերեալ երկիրներուն խորը:

«Ամեն կողմէ զրկուած նուէրները կը յան-
ձնուին կեդրոնական անտուկին, ի Կ. Պոլիս,
ուսկից կը բաշխուին տեղական մասնախումբ-
ներու պէտքին համաձայն»:

Քարերգի նահանգին մէջ, որ կը պա-
րունակէ նաեւ Մալաթիա, Արաբկիր, Բալու,
Ակն, Ձմէկաժագ եւ այլն, 1895-96ի ձմեռը,
նպատաւատոյց մասնախումբը կերակրեր է
74,000 հոգի, ասոր համար ծախսելով 600,000
ֆրանք: Ասկից զատ, իւրաքանչիւր քաղաքի
մէջ հաստատուել է աշխատանոցներ որ գործ-
կը գտնէին ո՛չ միայն տեղւոյն աղքատ կիները,
այլեւ շրջակայ գիւղերէն գաղթողներն ալ չու-
խայ եւ կերպաս կտրելով, ձեւերով ու հանգե-
րէն կարելով: Իսկ Էրիկ մարզիկ կը գոր-
ծածուէին աւերակներ մաքրելու, ճամբաներ
հարթելու եւ այլն:

Արաբկիրի մէջ, ուր ոտայնաճակութեան
բոլոր գործառնները բնորոշել էր ինչ, 350-
նոր գործառնական շինուել են եւ մեծա-
քանակ մանած գերձան գնուել է ոտայնաճ-
կութեան արհեստը առաջ տանելու համար:
Ծախք 48,000 ֆրանք: Եւ ամբողջ ժողովուր-
դը օգտուած է այդ ճարտարութեան վերա-
հաստատումէն: Կործանուած 1425 տուններէն
90ը միայն վերաշինուած էին վերջին նոյեմ-
բերին: Սակայն 400 ընտանիք իրենց անուն
արձանագրել տուած էին՝ այս գործին ջանքեր
համար իրենց ընտանիքները ու հարկ եղած
դրամն ապահովուած էր: Այդ թուականին
ի Մալաթիա, կործանուած 1500 տուններէն
300ը վերաշինուած էին, մեծ մասամբ զուի-
ցերական մասնախումբէն զրկուած գրամով,
իրաւ է թէ շատ ուղիւն տուններ, որոնք ոտ-
կայն ընտանիքի մը պատասխարան կրնան ըլլալ:
Նոյն գաւառին մէջ, 1896-97ի ձմեռը, 43,000
հոգիի նպատակ հասցունել հարկ էր: Հոնձ-
քերը գէշ արդիւնք տուած էին եւ ժողովուր-
դը կը տառապէր աղքատութենէ եւ հիւսն-
գութիւններէ: 200 ընտանիք պարունակող
միակ գիւղի մը մէջ 170 հիւսնդ կային:

Մարաշի մէջ, միսիօնարները մինչեւ 1896
գեկտեմբեր ստացած էին իբր 450,000 ֆրանք:
Այդ գումարով 1895-96ի ձմեռը կերակրեցին
30,000 հոգի որոնց թիւն հեռուէն ապահու-
ցուցին՝ այնպէս որ օգոստոսին կարելի եղաւ
գաղթեցունել ուտելիքի բաշխումը: Միեւնոյն
ատեն 30,000 ֆրանքի հագուստ, 15,000 ֆր-
անկողնոյ կազմած եւ 12,000 ֆրանքի տնական
պիտոյք բաժնած էին, բոլորն ալ տեղւոյ վրայ

պատրաստուած, որուն շնորհիւ շատ մը գոր-
ծառններ աշխատութիւն գտած էին:

Տիգրանակերտի, Կարնոյ եւ Ուրֆայի մէջ
հայերուն հասցեւորած օգնութիւնները թուելէ
ետք, տեղեկագիրը անգլիացի ու ամերիկացի
ուղեւորներու վկայութիւնները առաջ կը բերէ
որոնք ստույգով համակուած էին ժողովուր-
դին կրած թշուառութեան ի տես եւ միան-
գամայն հիացած՝ տեղական նպատաւատոյց
մասնախումբներուն անձնուրութեան, քաջա-
սրբութեան եւ գործնական խելքին վրայ:

Կ. Պոլսոյ եւ Վառնայի մէջ ալ օժանդակ
ճիւղեր ունի այս մասնախումբ որ օգնեց 1896
օգոստոս 14ի ջարդէն ետք աղքատացած ըն-
տանիքներուն՝ մայրաքաղաքին մէջ, ինչպէս
նաեւ գաղթականներուն ի Պոլսի վրայ:

Այս բոլոր աշխատութիւններուն ու նը-
պատներուն համար ծախսուած է մինչեւ այ-
սոր հինգ միլիոն ֆրանք: Եւ սակայն, շատ մը
գաւառներու մէջ, տակաւին կարելի չէ եղած
ժողովուրդն այն վիճակին հասցունել որ ինք
իր պէտքերուն բաւէ: «Եւ տակաւին զարմա-
նալի չէ, կը յորէ տեղեկագիրը, երբ աչքի
առաջ բերենք թաղուած հարկաւոր քա-
ղաքներն ու գիւղերը, աւերուած արտերը,
անհուն թիւն անոնց որոնք ամեն բան կորու-
սին: Եւ յիշենք թէ գետաւանի մը կողմէ հաս-
տատուած պաշտօնական վիճառագիր մը 50
միլիոն ֆրանք կը հաշուէր միմիայն Սեբաս-
տիոյ նահանգին հայ ժողովուրդին կրած վը-
նասը: Պէտք է աւելցունել նաեւ թէ երկրին
մէջ ո՛ր եւ է ապահովութիւն չի տիրել տա-
կաւին»:

Տեղեկագիրն այն մասը, որ կը խօսի ու-
րերու մասին, պիտի ծանօթացունենք յաջորդ-
թուով:

ԿԱՐՆՈՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Առաւիկ Կարնոյ ախորեալ Առաջնորդին
կողմէ Օրմանեան Պատրիարքին ուղղուած
ընդոճագիրը, զոր յիշեցինք նախորդ քունով:

Երուսաղէմ, 1/13 Յուլիս 1897:

Ամենապատիւ Սրբազան Տէր
Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան Պատի.
ժողովոյ. ի Կ. Պոլիս

Աղգային լրագիրներէն խոսեց թէ Արժ. Յով-
սէփ վարդապետ Այվազեան, որ Զեք Սրբազանութեան
Պատրիարքական տիկտը բարձրանալէն ընչ յետոյ

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԷՔՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱԶՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու.—
Կանխավճար արժեթուղթերու վրայ.— Կատան-
ձնէ յաճախորդներու հաշույն համար գան-
ձումներ ընել Եգիպտոսի և արտասահմանի
գլխավոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամա-
ւոր վաճառում ամեն տեսակ պարգեւաւոր
արժեթուղթերու, օրինակոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դի-
մել Պուլսը փողոց Եգիպտական հեռագրատան դէմ
Բէսսազողու դրամատունը:

ՀՐԱՆՏ ԱՁԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօզպէթիյէ, Պուլսի Լեւանի օթէլին քով ըն-
տի կամարակապ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու
եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սո-
վորական գիներով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԸ ԱՂԵՔՍԱՆՏՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն	օմնիպ.	կէս ուղ.	օմնիպ.	էքսպրէս	օմնիպ.	էքսպրէս	օմնիպիւս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Գահիրէ	մեկ.	առտ. 4 45	—	առտ. 7 —	առտ. 8 15	առտ. 9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա)	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 41	—	1 54
Տամանհուր	»	էրեկոյ 3 10	7 34	9 41	էրեկոյ 12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Ալէքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	էրեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆՏՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		օմնիպ.	կէս ուղ.	օմնիպ.	էքսպրէս	խառն	օմնիպ.	էքսպրէս	օմնիպիւս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Ալէքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	առտ. 9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	էրեկ. 12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա)	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	էրեկոյ 12 28	7 48	» կոյսարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53	Խամպիլիա	»	էրեկոյ 1 20	7 5
Ջակարթիկ)	ժամ.	1 34	8 54	Ջակարթիկ)	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	9 3
Իսմաիլիա	մեկ.	3 40	1 —	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —		մեկ.	4 17	9 4
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35

ունի որ վեց հարիւրի մօտ գրքեր կը պարունակէ:
Երեք տարիէ ի վեր այս նորահաստատ կառա-
վարութիւնը կը շարունակէ ամենայն հոգածութեամբ
խնամել իր հպատակները: Ժողովուրդը գոհ է իրմէ
և նախագահը Պ. Ջօրճ, Ֆրանսայի հանրապետու-
թեան նախագահին պէս, թերեւս քիչ մ'ալ աւելի
սիրուած է իր ժողովուրդէն:

Անցեալները միայն պզտիկ վէճ մը ծագած է
ընտրութիւններու առթիւ: Երեսփոխանական ժողո-
վին պայմանաժամը լրացած ըլլալով Պ. Ջօրճ մու-
ցած է զայն նորոգել և ասոր դէմ ժողովուրդը բո-
ղոքած է . . . ճիշդ Գահիրէի պէս:

ԻՆՑ ԿԸ ԿԱՐԴԱՆ

Գերման ժողովուրդը ամենէն աւելի ինչ գիրք
կը կարդայ: Այս հարցը յուզուելով վերջերս Պէր-
լինի թերթերուն մէջ, թերուդէմ վէճերու առթիւ
տուաւ. Նաժիօնալ Ջայրունկ կը պնդէ թէ նոր հե-
ղինակներն յաղթանակը տարած են հիներուն վրայ՝
«գրքի պայքարին» մէջ: Ազգ. մատենադարանին կող-
մէ հրատարակուած նորագոյն տեղեկագիր մը հա-
կաւոր կը հաստատէ. աւստիկ ամենէն շատ ծախ-
ուած գիրքերը. Եիլլէրի «Եկեօմ-թէլը»՝ 619,000
օրինակ, Եէօթէի «Հէրման և Տօրթէն»՝ 490,000,
Վօլթեր Սթօթի «Իվանօն»՝ 48,000 և Տիքէն-
սի «Բիբուիք»՝ 40,000:

ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՈՒ ԵԱՐՔ ՄԸ

Իբր թէ սովը, ժանտախտը և երկրաշարժը
բաւական չըլլային, հիսա ալ մարտիները կուգան
Հնդկաստանի աղէտներու շարքը աւելցնել:

Պոմպէյէն առնուած վերջին լուրերու համե-
մատ, այդ աւերիչ կենդանիները ամբողջ Պոմպէյի
շրջականերուն վրայ տարածուած են և բոլորովին
բնակիչ ըրած են այս տարուան հունձքերը:

Տեղը չէ՞ ըսել թէ դժբաղդութիւն մը երբեք մի-
նակ չի գար:

ՏԱՔԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Այս պահուս սաստիկ տաք կը տիրէ Ամերիկայի
մէջ: Ի Նիւ-Եօրք յուլիս 10ին և 11ին տամբջորս
հողի մեռած են արեւազարկէ: Շիքաղոյի մէջ տաքէն
216 մահեր պատահած են ինչպէս նաեւ տասը նոյն-
օրինակ դէպքեր ի Նուիլի և չորս ի Միլիփի:

Այս հաշուով ամերիկայի թուրքները ամառն
ալ կրնան հոս անցընել ի մեծ ցնծութիւն . . . օթէլ-
ներու:

Դատարանի մը մէջ:

Նախագահը՝ ամբաստանեալին.

— Խանութի մը ցուցափեղէն ձեր բրքեկիօք
մը գողնալը տեսած են: Ի՞նչ ըսելիք ունիք դուք
դձեզ արդարացնելու համար:

— Պարոն նախագահ, իրաւունք ունիք, բրքեկ-
իօթի մը պէտք ունէի, վստահութիւն ներշնչելու հա-
մար . . . սեղանաւորական ընկերութիւն մը կազմելու
վրայ եմ:

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, սստոնսի, մոր-
քի եւ շղային հիւանդութեանց: Կ'ընդունի իրեն
դիմող հիւանդներ Միգոմ Զահար, Շեքիրս Զօքիի
հիւր դէմը. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12
եւ կէս օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաւթ
ձրի կը դարմանուին:

ԲԻԻՋԱՆԻ ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել արգոյ հա-
սարակութեան թէ Պաղար Մուրուրի մէջ
խանութ մը բացած են ուր ընտիր տեսակէ
և ծեծուած խահվէ պիտի ծախուի սովորա-
կան գներով:

Այս խանութին մէջ կան նաեւ զովա-
ցուցիչ ըմպելիներ:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի